


# Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ



## Հորին մօտ գտնուող կինը

Written by: Edward Hughes

Illustrated by: Lazarus

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

Adapted by: Ruth Klassen

Story 47 of 60

[www.M1914.org](http://www.M1914.org)


*Bible for Children, PO Box 3, Winnipeg, MB R3C 2G1 Canada*

License: You have the right to copy or print this story, as long as you do not sell it.

Հայերէն


Armenian

Յիսուս եւ իր աշակերտները կը ճամբորդէին Սամարացիներուն հողերուն վրայէն: Անոնք հասան Սուքար կոչուող քաղաքը:




1

Նոր մը կար հոն, ուր Սուքարի ժողովուրդը իրենց խմելիք ջուրը կը քաշէր: Յակօր, Իսրայէլի հայրը, այդ հողը փորած էր երկար ժամանակ առաջ:



2

Կանուխ կեսօրէ ետք օրը պէտք էր, որ արեւոտ եւ տաք ըլլար: Տարօրինակօրէն, Յիսուս նստաւ հորին մօտ, մինչ աշակերտները Սուքար գացին ուտելիք գնելու:



3


Յիսուս առանձին էր, բայց ոչ երկար ժամանակ: Տիկին մը, որ Սուքար կ'ապրէր եկաւ ջուր քաշելու:



4


"Չուր տուր ինձի, որ խմեմ" ըսաւ Յիսուս անոր:

Կինը զարմացաւ. "Ինչպէ՞ս դուն որ հրեայ ես ինձմէ ջուր կը պահանջես, ես սամարիդացի կին մըն եմ" ըսաւ ան: Այդ օրերուն հրեաները գործ չունէին Սամարադացիներուն հետ:




5

Ան աւելի անակնկալի եկաւ երբ Յիսուս ըսաւ, "Եթէ գիտնայիր ես ով եմ, ինձմէ կը պահանջէիր ապրելու ջուրը":




6

Կինը ըսաւ Յիսուսի. "Տէր, դուն բան մը չունիս, որ հետը քաշես, եւ հորը շատ խորունկ է: Ուրեմն ուրկէ՞ դուն կը ստանաս այդ ապրելու ջուրը: Դուն աւելի մե՞ծ ես քան մեր հայրը, Յակոբ, որ մեզի այս հորը տուաւ":




7

"Ով որ այս ջուրէն խմէ նորէն պիտի ծարաւնայ", ըսաւ Յիսուս կնկան: "Բայց ով որ խմէ այն ջուրը, որ ես պիտի տամ երբեք պիտի չծարաւնայ":




8




Այն ջուրը, որ ես պիտի տամ... իր մեջ պիտի դառնայ ջուրի աղբիւր, որ կը բխի յաւերժական կեանքէն": "Տէր, ինձի տուր այդ ջուրէն..." ըսաւ կինը:

9



Յիսուս կնկան ըսաւ, որ երթայ եւ իր ամուսինը կանչէ. "Ես ամուսին չունիմ", պատասխանեց կինը. "Դուն հինգ ամուսիններ ունեցած ես", ըսաւ Յիսուս: "Եւ ան որ հիմա քու հետդ է քու ամուսինդ չէ":

10



Կինը անդրադարձաւ, որ Յիսուս մարգարէ է: Ան փորձեց անոր հետ վիճիլ, որ ուր պետք է պաշտել Աստուծոյ, Երուսաղէմ կամ սամարիացիներու տուրք լեռը: Յիսուս ըսաւ, որ ճիշդ պաշտողները կը պաշտեն Հայրը հոգիի եւ իրականութեան մէջ:

11




"Գիտեմ, որ Փրկիչը կու գայ", ըսաւ կինը Յիսուսի: "Երբ Ան գայ, Ան պիտի ըսէ մեզի ամէն ինչ" "Ես որ հետդ կը խօսիմ ինքն եմ", ըսաւ Յիսուս: Այդ ատեն աշակերտները ետ դարձան, կինը սուղ կաւամանը հոն ձգեց հորին մօտ եւ ետ քաղաք դարձաւ:

12



"Եկուր տես մարդ մը, որ կ'ըսէ ինչ որ ըրեր եմ", ըսաւ կինը Սուքար մարդուն:

13



"Կրնա՞յ ըլլալ որ այս է Քրիստոսը": Մարդիկը ձգեցին քաղաքը, որ Յիսուսը տեսնէ իրենց համար:

14

Մինչ այդ աշակերտները Յիսուսին ըսին, որ ճաշէ: Բայց Յիսուս պատասխանեց.




15

"Իմ ճաշս ան է, որ կատարեմ կամքը Ասոր որ ինձ դրկեց եւ Իր գործը ամբողջացնեմ": Իր գործը ժողովուրդը Աստուծոյ դարձնելն է:




16

Քանի որ սամարացիներ Իրեն հաւատացին կնկան պատահածին համար: Անոնք առաջարկեցին Յիսուսին, որ հետերնին մնայ եւ Ինք երկու օր հետերնին մնաց:



17

Շատեր ալ հաւատացին Յիսուսի խօսքերուն: Անոնք ըսին "... մենք անձնապէս լսեցինք եւ գիտցանք, որ իրաւ այս է Զրիստոսը, աշխարհի Փրկիչը":



18

Հորին մօտ գտնուող կիկը  
Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,  
Սուրբ Գիրքը:  
Կը գտնուի հետեւեալին մէջ  
Յովհաննու 4

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"  
Սաղմոս 119:130

Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք Ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի Խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներք քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան Իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կէտնքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կէտնք մը ապրիլ, եւ օր մը հետո՞ղ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:  
Յովհաննու 3:16

